5449

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«06» 05 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 054-24

Ձեռնարկողը՝ ***«Հերտ» ՍՊԸ***
Ք. Երևան, Նոյ թաղամաս 119 փող.

Գործունեությունը՝ ***Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների ջրամատակարարման համար ջրագծի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

Տեկտոնական տեսակետից շրջանն ունի բավականին բարդ երկրաբանական կառուցվածք, ինչը պայմանավորված է տեղադիրքով:

Սեյսմատեկտոնական տեսակետից շրջանը և տարածքը բնութագրվում է տեկտոնական բազմազան ձևերի առկայությամբ, բարդացված խզումային և ծալքավոր կառույցներով: Շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax=0.4g արագացմամբ, համաձայն ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգավոր գոտիավորման քարտեզի, 9 և ավելի բալ սեյսմիկությամբ:

Գյուլագարակի տարածաշրջանի ռելիեֆը չափավոր զառիթափ-գոգավոր լանջերով է, մասնատված հովտաձորակային ցանցով:

Մակերևութային գերակշռող թեքությունները՝ 20-30%:

Տարածաշրջանն առանձնանում է բարեխառն կլիմայով՝ զով, խոնավ ամառներով +37°C և չափավոր ցուրտ ձնեռներով՝ -31°C: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 6.9°C: Տեղումների միջին տարեկան քանակը կազմում է 688 մմ: Մինչև 1300-1400 մետր բացարձակ բարձրությունների վրա կլիման չափավոր տաք է, 1600–1700 մ բարձրությունների վրա չափավոր ցուրտ, իսկ մինչև 2100մ բարձրություններում գերիշխում է ցուրտ կլիմայական գոտին:

Ուսումնասիրվող տարածքի ջրագրական ցանցը պատկանում է Ձորագետ գետին, որից հեռավորությունը կազմում է մոտ 6,7 կմ:

Տարածաշրջանն աչքի է ընկնում խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ, ռելիեֆի խայտաբղետությամբ և դրան համապատասխան բուսական հարուստ կենսաբազմազանությամբ, որը հիմնականում պայմանավորված է աշխարհագրական դիրքով և ծովի մակերևույթից բարձրությամբ: Անտառային ֆլորան հիմնականում ներկայացված է Կովկասյան և Բորեալ ֆլորաների տարրերից: Տարածաշրջանում հանդիպում են անոթավոր բույսերի 62 ընտանիքի և 142 ցեղի պատկանող 389 տեսակ, որոնցից 6 տեսակն ընդգրկված են Հայաստանի բույսերի Կարմիր գրքում՝ Թամամշյանիելա կարմրավուն, Կիզախոտ լայնատերև, գնարբուկ սրտատերև, սնկեր՝ Յուղասունկ կվենու:

Կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներից հանդիպում են Գորշ արջ, Անտառակատու, Իշամեղու գետնային: Կարմիր գրքերում գրանցված բույսերի և կենդանիների հայտնաբերման դեպքում, հաշվետվությունում ներառված են միջոցառումներ:

Համաձայն հաշվետվության՝ հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների համար ջրագիծը նախատեսված է ստորգետնյա եղանակով՝ Φ90 պոլիէթիլային խողովակներով: Այն սկիզբ է առնելու «անանուն» աղբյուրից, որը գտնվում է Գյուլագարակ գյուղից հարավ, ձորակի հունի հետևյալ կոորդինատներում՝ X=400 55′11.1″ Y= 440 28′40.6″ 1584մ բարձրության վրա:

Ջրագիծն անցնելու է համայնքային սեփականություն հանդիսացող և անտառային հողատեսքերով: Ջրագծի երկարությունը կազմում է 2407.58մ, որից անտառային հողերով անցնող մասի երկարությունը 1560 մ է, որն անցնելու է ճանապարհի երկայնքով:

Ըստ հաշվետվության՝ ժամանակավոր ճանապարհների կառուցում նախատեսված չէ, օգտագործվելու է գոյություն ունեցող անտառմիջյան ճանապարհները:

Կառուցվող տեղամասում նախատեսվում է՝ խրամուղու 3-4-րդ կարգի գրունտների փորում, ավազով նախաշերտի և պաշտպանիչ շերտի իրականացում, բնահողի հետլիցք տոփանումով: Աղբյուրի վրա նախատեսվում է կառուցել կապտաժ՝ թաց և չոր հորերով:

Նախատեսվում է դատարկման հորերի, օդահան հորերի և մարիչ հորի կառուցում:

Տեղադրվող բոլոր սարքավորումներն ու ձևավոր մասերը նախատեսված է PN10 ճնշման դասին համապատասխան:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 054-24

«06» Մայիս 2024թ.

Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների ջրամատակարարման համար ջրագծի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Հերտ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, Գարգառ բնակավայր

Ներածական մաս. «Հերտ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությամբ /այսուհետ՝ հաշվետվություն/ նախատեսվում է Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում կառուցվող հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների ջրամատակարարումն ապահովելու համար խմելու-կենցաղային ջրագծի կառուցման աշխատանքներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /ՀՕ-110-Ն/ 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ: Աշխատանքներն իրականացվելու են «Գյուլագարակի» պետական արգելավայրի տարածքում՝ անտառային հողերում:

Նկարագրական մաս. Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Լոռու մարզում՝ Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրի վարչական տարածքում: Ջրագծի անցկացումը նախատեսվում է կառուցվող հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների ջրամատակարարումն ապահովելու համար:

Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների կառուցման գործունեության վերաբերյալ 2021թ. հուլիսի 21-ին տրվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացություն:

Համաձայն հաշվետվությունում առկա տեղեկատվության՝ հյուրանոցային համալիրի տարածքը պարսպապատվել է, անցկացվել է շուրջ 2.3 կմ գազատար, անցկացվել է շուրջ 1.7 կմ երկարության 10000 կՎա հզորությամբ էլ. սնուցման գիծ: Տեղադրվել և շահագործման է հանձնվել 630 կվա հզորությամբ ենթակայան: Այս պահին կատարվում է 11 առանձնատների կառուցման աշխատանքներ:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Բազումի լեռնաշղթայի ստորոտում: Տեղամասը հիմնականում բաղկացած է հրաբխածին, ենթահրաբխածին նստվածքային առաջացումներից ներկայացված պորֆիրիտներից, տուֆաբրեկչիաներից:

Ջրագծի խողովակաշարի կառուցման ընթացքում իրականացվելու է հետևյալ հողային աշխատանքները՝

- խրամուղու քանդում 3-րդ կարգի գրունտում՝ մեխանիզմով կողլցմամբ՝ 1365խմ,
- խրամուղու քանդում 4-րդ կարգի գրունտում՝ մեխանիզմով կողլցմամբ՝ 651 խմ,
- խրամուղու քանդում 3-րդ կարգի գրունտում՝ ձեռքով կողլցմամբ՝ 201,6 խմ,
- ավազի նախապատրաստական շերտի կառուցում՝ 100մմ հաստությամբ՝ 203 խմ,
- ավազի պաշտպանիչ շերտի կառուցում՝ 300 մմ հաստությամբ՝ 693 խմ,
- բնահողի հետլիցք մեխանիզմով՝ 13216խմ,
- ավելորդ գրունտի փոռում տեղում ձեռքով՝ 896 խմ,

Ընդամենը՝ իրականացվելու է 2217.6հազ./խմ խրամուղու քանդում, և նույնքան ծավալով հետլիցք: Կապտաժի, չոր և թաց հորերի կառուցման ընթացքում իրականացվելու է հետևյալ հողային աշխատանքներ՝

-3-րդ կարգի գրունտի մշակում՝ ձեռքով կողլցմամբ՝ 5.2 խմ,
-4-րդ կարգի գրունտի մշակում՝ ձեռքով կողլցմամբ՝ 8.3 խմ,
-խճի նախաշերտի կառուցում 100մմ հաստությամբ՝ տոփանումով՝ 0.5 խմ,
-ջրհավաք հիմքի պատի կառուցում բետոնից՝ 0.65 խմ,
-ջրհավաք պատի կառուցում բետոնից՝ 0.8 խմ,
- չոր և թաց հորերի հիմնատակի և պատերի կառուցում բետոնից՝ 2.75 խմ,
- չոր և թաց հորերի ծածկի կառուցում բետոնից՝ 0.34 խմ,
- բնահողի հետլիցք ձեռքով՝ 4.6 խմ,
-ավելորդ գրունտի փոռում տեղում ձեռքով՝ 8.9 խմ,

Ընդամենը՝ 13.5 խմ և նույնքան ծավալի հետլիցք,

Բնահողի հետլիցք ձեռքով՝ 4.6խմ+ավելորդ գրունտի փոռում տեղում ձեռքով՝ 8.9խմ:

Արգելավայրի տարածքում ջրագծի կառուցման համար բետոնային աշխատանքները բացառվելու են, խրամուղիների փորման աշխատանքները կատարվելու են ձեռքի աշխատանքով/բահերով:

Ըստ հաշվետվության՝ ջրագծի խողովակաշարի կառուցման արդյունքում առաջացող շինարարական աղբը՝ 0.5տ ծավալով, տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբն աշխատակիցների կողմից տեղափոխվելու է համայնքի կողմից տեղադրված աղբամանների մեջ: Ավելցուկային հողային հանույթ չի առաջանալու, իսկ եթե չնչին քանակ էլ առաջանա նախատեսվում է տեղափոխել շինհրապարակ հյուրանոցային համալրիր կառուցապատման տարածք, և օգտագործել հարթեցման աշխատանքների համար:

Հողի բերրի շերտի ծավալը կկազմի՝ 2407x3x0.4=2888.4խմ, որը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կկտրվի, կտեղադրվի համապատասխան վայրում և կօգտագործվի հետլիցքից հետո բերեկարգում իրականացնելու համար:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բնական ռեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Շինարարության ժամանակ, ջրցանի, բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստեռնով, պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (14 մարդ), ինչը կազմում է 21.750 մ^3/շին. ժամ: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմաններն ապահովվելու են՝ տեղադրելով շարժական բիոզուգարան, որը տեղադրվելու է վարձակալության հիմունքով և աշխատանքների ավարտից հետո հանվելու է:

Խողովակաշարի անցկացման աշխատանքները նախատեսվում է ավարտել 10 օրվա ընթացքում:

Անհրաժեշտ շինտեխնիկան կայանվելու է կառուցվող հյուրանոցային համալիրի շին հրապարակում:

Համաձայն հաշվետվության ջրագծի անցկացման տարածքներում ծառահատում չի իրականացվելու:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, հողային աշխատանքների, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն հաշվետվության շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կներառեն՝ օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսներ վտանգավոր նյութերի, այդ թվում տրանսպորտային միջոցներից և սարքավորումներից յուղերի հնարավոր ներթափանցման կանխարգելմանը, տարածքի կենսաբազմազանության պահպանման, ՀՀ Կարմիր գրքերում հաշվառված բուսական և կենդանական տեսակների հայտնաբերմանն ու դրանց պահպանմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են հաշվետվության միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Մասնավորապես.

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով՝ տեխնիկական սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում՝ բացառելով անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
- գործունեության տարածքում աշխատանքներն իրականացնել՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ին «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով,
- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում ընկերությունը տեղեկացնելու է լիազոր մարմնին՝ դրանց պահպանությունն ապահովելու նպատակով,
- բացառվելու են ծառահատումները, բնական ռելիեֆի արհեստական փոփոխությունը,
- շինարարական աշխատանքների ժամանակ շրջակա միջավայրը և գործունեության տարածքը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,
- շինարարության ընթացքում պահպանվելու են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել 200000 ՀՀ դրամ, իսկ մշտադիտարկումների համար՝ 300000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Լոռու մարզում՝ Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում: Ջրագծի անցկացումը նախատեսվում է կառուցվող հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների ջրամատակարարումն ապահովելու համար:

Նախատեսվող գործունեության իրականացման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննության գործընթացն իրականացվել է օրենքի պահանջներին համապատասխան:

Ջրագծի անցկացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են նվազագույն՝ կրելով ժամանակավոր բնույթ, քանի որ աշխատանքներն իրականացվելու են 10 օրվա ընթացքում: Արգելավայրի անտառային հողերի տարածքով անցնող հատվածում ջրագծի կառուցման համար անհրաժեշտ խրամուղիների փորման աշխատանքները կատարվելու են ձեռքով/բահերով/:

Համաձայն «Հայանտառ» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2024թ. մարտի 28-ի գրության՝ Ընկերության կողմից ներկայացված հատակագծերը Կազմակերպության կողմից գրանցվել են կադաստրի կոմիտեում: համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1045-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Ընկերության և լիազոր մարմնի միջև՝ անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման պայմանագրի կնքում, որի համաձայն ընկերությունը կիրականացնի անտառային հողերի առնվազն կրկնապատիկի չափով անտառպատման աշխատանքներ:

Ընկերության կողմից նախատեսվում է «անանուն» աղբյուրից ջրօգտագործում իրականացնելու համար շրջակա միջավայրի նախարարությունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ ջրօգտագործման թույլտվություն:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Լոռու մարզպետարանը, Գյուլագարակի համայնքապետարանը, Գարգառ բնակավայրը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել են հաշվետվության լրամշակումներ, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման և փորձաքննության բոլոր փուլերում Լոռու մարզի Գյուլագարակի համայնքապետարանում և Գարգառ բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհաանվտանգության և սանիտարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկի և ճանապարհների առավելագույն ծանրաբեռնվածությունը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում բացառել շինաղբի կուտակումները, շինաղբի տեղափոխումն իրականացնել Գյուլագարակ համայնքի կողմից հատկացված վայր:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում հնարավորինս չխաթարել տարածքի էկոհամակարգը, լանդշաֆտը և հարակից շրջակա միջավայրը՝ բացառելով ծառահատումները:

- Բացառել արգելավայրի տարածքում ջրագծի կառուցման համար բետոնային աշխատանքների իրականացումը, խրամուղիների փորման աշխատանքները կատարել ձեռքի աշխատանքով/բահերով:

- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների հայտնաբերման դեպքում՝ դադարեցնել աշխատանքները և տեղեկացնել լիազոր մարմնին:

- «Անանուն» աղբյուրից ջրառ իրականացնելու համար՝ շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնել ջրօգտագործման թույլտվության ստացման հայտ՝ կցելով Կառավարության 2023 թվականի օգոստոսի 3-ի N 1332-Ն որոշմամբ պահանջվող փաստաթղթերը:

- Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1045-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ լիազոր մարմնի հետ կնքել անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման պայմանագիր:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում հյուրանոցային համալիրի և մենատնային քոթեջների ջրամատակարարման համար ջրագծի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ գլխ. մասնագետ՝ Արմինե Վարդանյան